



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

à ò à þ à ô ø

15 ապրիլի 2010 թվականի N 440 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ)
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԳՐԱՆՑ ԿԱՏԱԼՈԳԻ ՆԵՐԳՐՄԱՆ ՈՒ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) անհատական բնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգի ներդրման ու կիրառման կարգը (այսուհետ՝ կարգ)՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության գյուղական բնակավայրերում բնակելի կառուցապատման օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգի ներդրման ու կիրառման կարգը հաստատելու մասին» N 92 որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից մշակված՝ գյուղական համայնքներում բազմակի օգտագործման անհատական բնակելի 10 տների նախագծերի կատալոգի և գյուղական համայնքներում բազմակի օգտագործման անհատական բնակելի 10 տների խորհրդատվական ձեռնարկի կիրառումն իրականացնել սույն որոշման 1-ին կետով հաստատված կարգի համաձայն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

S. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. ապրիլի 28
Երևան

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ)
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱԼՈԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) անհատական բնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի (այսուհետ՝ բազմակի օգտագործման նախագծեր) ներդրման, ինչպես նաև այդ նախագծերի գովազդային տեղեկագրերից կազմված հավաք կատալոգի (այսուհետ՝ կատալոգ) կիրառման կարգը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության (այսուհետ՝ պատվիրատու) պատվերով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված, փորձագիտական դրական եզրակացություն ստացած և հաստատված բնակելի տների նախագծային փաստաթղթերի բնագրերն ու կատալոգը թղթային և էլեկտրոնային կրիչներով պահվում են պատվիրատուի մոտ՝ բնօրինակի իրավունքով:

3. Պատվիրատուն ծանոթացման և հետագա կիրառման նպատակով սույն կարգը և կատալոգը՝ թղթային, իսկ կատալոգում ներառված բնակելի տների նախագծային փաստաթղթերը՝ էլեկտրոնային կրիչներով տրամադրում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝ միաժամանակ տեղադրելով դրանք պատվիրատուի ինտերնետային կայքում:

4. Հայաստանի Հանրապետության մարզպետները (այսուհետ՝ իրավասու մարմին), կատալոգն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում տեսանելի վայրերում տեղադրված ցուցավահանակների և զանգվածային լրատվության միջոցներով (տեղական և հանրապետական ռադիո, հեռուստատեսություն, լրագիր) հասարակայնությանն իրազեկում են կատալոգի առկայության, այդ թվում՝ պատվիրատուի ինտերնետային կայքում տեղադրված լինելու, ինչպես նաև դրա կիրառման հնարավորությունների մասին: Հայաստանի Հանրա-

պետության համայնքների ղեկավարները համապատասխան մարզպետից կարող են ստանալ բնակելի տների կատալոգում ներառված բնակելի տների նախագծային փաստաթղթերը՝ էլեկտրոնային կրիչներով:

5. Սույն կարգին համապատասխան՝ քաղաքաշինական գործունեություն իրականացնողը (այսուհետ՝ կառուցապատող) պատվիրատուի ինտերնետային կայքից, իսկ ինտերնետային կայքից օգտվելու հնարավորության բացակայության դեպքում՝ համապատասխան իրավասու մարմնից կամ սույն կարգի 4-րդ կետի համաձայն տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա դիմում է համայնքի ղեկավարին՝ նշելով կատալոգից ընտրված համապատասխան տունը և ներկայացնելով իր միջոցներով բազմացված նախագծային փաստաթղթերը՝ 5-օրյա ժամկետում ստանում է տարածքի հետ տեղակապված ու համաձայնեցված նախագիծը և շինարարության թույլտվությունը:

6. Համայնքի ղեկավարը տեղակապման ժամանակ կարող է առաջադրել բնակելի տան ճակատային լուծումների հարդարման նյութերի փոփոխություններ՝ տեղական շինանյութերի օգտագործմամբ՝ ելնելով բնակավայրի քաղաքաշինական իրադրությունից և ճարտարապետական միջավայրի առանձնահատկություններից:

7. Կառուցապատողը բնակելի տան նախագծով հաստատված հատակագծային լուծումներում կարող է կատարել միջնորմների տեղադրման փոփոխություններ՝ օբյեկտի կոնստրուկտիվ համակարգը չխաթարելու պարտադիր պայմանով:

8. Բազմակի օգտագործման նախագծերը կիրառվում են նաև այն քաղաքային համայնքներում, որոնց տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմում չկա ճարտարապետի հաստիք:

9. Կառուցապատողը պարտավոր է շինարարությունն իրականացնել համաձայնեցված նախագծին և Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

10. Բնակելի տան շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվում է ավարտված շինարարության շահագործման փաստագրում՝ շահագործման ակտի ձևակերպմամբ:

Ավարտված շինարարության շահագործման ակտը հիմք է կառուցված օբյեկտի նկատմամբ գույքային իրավունքների գրանցման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ